UN WATER

22 ՄԱՐՏ

ՋՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐ

Ջուրը խաղաղության համար 2024

ՋՈՒՐԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

2024 թվականի Ջրի համաշխարհային օրվա տեղեկատվական թերթիկ

Ի՞նչ է Ջրի համաշխարհային օրը

Ամեն տարի, Ջրի համաշխարհային օրը (Մարտի 22) բարձրացնում է իրազեկությունը և ոգեշնչում գործողությունների՝ ջրի և սանիտարական ճգնաժամի դեմ պայքարելու համար: Այս միջոցառումն անցկացվելով ՄԱԿ-ի հովանու ներքո, համակարգվում է «ՄԱԿ-ՋՈՒՐ» կառույցի կողմից, և անցկացվում է «ՄԱԿ-ՋՈՒՐ» կառույցի մեկ կամ մի քանի անդամների կամ գործընկերների կողմից, ովքեր ունեն համապատասխան մանդատ: Թեման նախապես առաջարկվում է «ՄԱԿ-ՋՈՒՐ» կառույցի կողմից և համաձայնեցվում է ՄԱԿ-ի «Ջրային ռեսուրսների վիճակի մասին» զեկույցի հետ, որը յուրաքանչյուր տարի հրապարակվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից «ՄԱԿ-ՋՈՒՐ» կառույցի անունից, իսկ դրա պարտաստումը համակարգվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ջրային ռեսուրսների գնահատման ծրագրի կողմից:

2024 թվականին Ջրի համաշխարհային օրվա թեման է՝ *«Ջրի օգտագործումը՝ խաղաղության համար»*, իսկ Ջրային ռեսուրսների վիճակի մասին Համաշխարհային զեկույցի անվանումն է *«Ջրի օգտագործումը խաղաղության և բարեկեցության համար»*: Ջրի համաշխարհային օրվան նվիրված արշավը պարզապես կոչվում է՝ *«Ջուրը խաղաղության համար»*:

«Ջուրը խաղաղության համար» բացատրությունը

Ջուրը կարող է կերտել խաղաղություն կամ հրահրել կոնֆլիկտ:

Երբ ջրի պաշարները չեն բավականացնում կամ այն աղտոտված է, կամ երբ մարդիկ ջրին անհավասար հասանելիություն կամ առհասարակ հասանելիություն չունեն, հասարակությունների և երկրների միջև կարող են լարվածություններ ծագել:

Աշխարհում ավելի քան 3 միլիարդ մարդ կախում ունի պետական սահմաններ հատող ջրային ռեսուրսներից: Առայժմ, 153 երկրներից, որոնք հարևան երկրների հետ կիսում են գետեր, լճեր, ջրատար հորիզոններ, միայն 24 երկրներ են հաղորդում ընդհանուր ջրային ռեսուրսների վերաբերյալ համագործակցության համաձայնագրերի առկայության մասին[1]:

Կլիմայի փոփոխության ազդեցության ուժեղացման հետ մեկտեղ հրատապ անհրաժեշտություն է առաջանում համատեղել ջանքերը, ինչպես երկրների ներսում, այնպես էլ նրանց միջև՝ պաշտպանելու և պահպանելու համար մեր ամենաթանկ ռեսուրսը:

Բնակչության աճի հետ մեկտեղ, գնալով ջուրն ավելի մեծ կարևորություն կունենա աղքատության և շրջակա միջավայրի վիճակի վատթարացման դեմ պայքարում:

Ջրային ռեսուրսների ոլորտում համագործակցությունը կարող է կենսական կայունություն ստեղծել էքստրեմալ եղանակային երևույթների նկատմամբ և օգնել բնակչությանը մեղմել և հարմարվել փոփոխվող կլիմայական պայմաններին:

Հիդրոլոգիական ցիկլի ճիշտ գործնեությունից և դրա արդարացի կառավարումից է կախված հանրային առողջությունը և բարեկեցությունը, սննդի և էներգետիկ համակարգերը, տնտեսական արտադրողականությունը և շրջակա միջավայրի ամբողջականությունը:

Սա նշանակում է, որ խտրականության բացառումը և հավասարությունը ջրի և սանիտարական պայմանների հասանելիության ապահովման ոլորտում կարող են դրական ալիքային ազդեցություն ունենալ ամբողջ հասարակության վրա:

Ջրային ռեսուրսների հետ կապված հարցերով խաղաղ համագործակցությունը կարող է վերաճել խաղաղ համագործակցության՝ բոլոր ոլորտներում:

Համատեղ ջանքերի շնորհիվ, որոնք ուղղված են մարդկանց միջև իրավունքների ու կարիքների հավասարակշռության ապահովմանը, ջուրը կարող է լինել կայունացնող ուժ և կայուն զարգացման կատալիզատոր:

[1] UN-Water (2021), *Summary Progress Update 2021: SDG 6 — water and sanitation for all*: https://www.unwater.org/publications/summary-progress-update-2021-sdg-6-water-and-sanitation-all

Ժամանակի ընթացքում, ջրային ռեսուրսների ոլորտում առավել շատ գրանցվել են համագործակցության, քան հակամարտության դեպքեր, սակայն դեռ շատ անելիքներ կան:

Մենք պետք է գործենք՝ գիտակցելով, որ ջուրը միայն ռեսուրս չէ, որը կարելի է օգտագործել և որի համար կարելի է մրցակցել, դա մարդու իրավունք է՝ ներհատուկ կյանքի բոլոր ոլորտների համար:

Տեղական և ազգային մակարդակում տարբեր ջրօգտագործողներ, մասնավորապես, ջրամատակարարման և ջրահեռացման կոմունալ ծառայությունները, էներգետիկան, սննդի և արդյունաբերական ձեռնարկությունները պետք է համագործակցեն՝ հիմնվելով ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման մոտեցման վրա և խթանեն շրջանաձև տնտեսությունը, որը կատարում է մարդու իրավունքների իրականացումը:

Ջրավազանային մակարդակում երկրները պետք է մշակեն համաձայնագրեր և ստեղծեն ինստիտուտներ՝ միջազգային սահմաններ հատող ջրային ռեսուրսների խաղաղ կառավարման համար:

Անդրսահմանային ջրերի ոլորտում համագործակցությունը կարևոր պայման է խաղաղության և բարեկեցության համար: Կառավարությունները պետք է համագործակցեն երկկողմ, տարածաշրջանային կամ համաշխարհային հիմունքներով, օրինակ՝ ՄԱԿ-ի Ջրի կոնվենցիայի և Ջրահոսքերի մասին Կոնվենցիաների ստորագրման և իրականացման ճանապարհով:

Մեզանից յուրաքանչյուրն ունի իր դերը:

Որպես անհատներ՝ մենք կարող ենք ավելի խնայողաբար օգտագործել ջուրը՝ նվազեցնելով ճնշումը շրջակա միջավայրի և ջրային ենթակառուցվածքների վրա: Մենք կարող ենք կոչ անել նաև պաշտոնատար անձանց, ընկերություններին, կազմակերպություններին և այլոց, պատասխանատու լինել ջրի հետ կապված, իրենց կողմից ստանձնած պարտավորությունների և խոստումների կատարման հարցում: Մեր աշխատանքային գործունեության ընթացքում մենք կարող ենք նաև ապահովել, որ մեր բոլոր գործողությունները կատարվեն պատասխանատվությամբ և պաշտպանեն ջրային ռեսուրսներն ու էկոհամակարգերը՝ ըստ օրենքի: Մենք բոլորս պետք է համախմբվենք ջրի շուրջ և ջուրն օգտագործենք հանուն խաղաղության՝ դնելով ավելի կայուն և բարեկեցիկ վաղվա օրվա հիմքերը:

Ինչպե՞ս կարող է ջուրը կապված լինել կոնֆլիկտի և անկայունության հետ:

Ջուրը հաճախ է դեր խաղում կոնֆլիկտների ժամանակ: Օրինակ՝

1. **Ջուրը կարող է խթան հանդիսանալ**, երբ տարբեր ջրօգտագործողների, ներառյալ պետության և մարզերի/գավառների շահերի բախումն անլուծելի է թվում, կամ երբ ջրի քանակն ու/կամ որակը նվազում են, ինչն էլ կարող է ազդել մարդու և էկոհամակարգերի առողջության վրա:
2. **Ջուրը կարող է զենք լինել** ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական դերակատարների ձեռքում, զինված կոնֆլիկտների ժամանակ և ծառայել որպես տարածքի և բնակչության նկատմամբ վերահսկողություն ձեռք բերելու կամ պահպանելու, կամ հակառակորդի խմբերի վրա ճնշում գործադրելու միջոց:
3. **Ջուրը կարող է լինել կոնֆլիկտի զոհ**, երբ ջրային ռեսուրսները, ջրային համակարգերը կամ կոմունալ ծառայությունների աշխատակիցները դիտավորյալ կամ պատահական զոհեր կամ բռնության թիրախ են դառնում: Քաղաքացիական ենթակառուցվածքների, ներառյալ ջրային համակարգերի վրա հարձակումները լուրջ վտանգ են ներկայացնում առողջության համար[2] և խախտում միջազգային մարդասիրական իրավունքը:

[2] Talhami, M. and M. Zeitoun (2021), "The impact of attacks on urban services II: Reverberating effects of damage to water and wastewater systems on infectious disease". International Review of the Red Cross 102(915): 1293 – 1325: https://international-review.icrc.org/articles/impact-of-attacks-on-urban-services-ii-damage-to-wastewater-systems-infectious-disease-915

Ջուրը կարող է ազդեցությունը բազմակի ուժգնացնող գործոն լինել բարդ կոնֆլիկտների կամ անկայունության իրավիճակներում, օրինակ, երբ կառավարության անկարողությունը ջրային հիմնական ծառայություններ մատուցելու համար հանգեցնում է պետական կառույցների ապալեգիտիմացմանը և առաջացնում սոցիալական անկարգություններ, կամ եթե այլ գործոններ, ինչպիսիք են պարենային անապահովությունը, գործազրկությունը և ներքին միգրացիան համընկնում է ջրի հետ կապված սթրեսի հետ, որն հանգեցնում է կառավարման տարբեր մակարդակներում անկայունության[3]:

Գլոբալ փոփոխականությունը ջրի շրջապտույտում

Հիդրոլոգիական ցիկլի գլոբալ փոփոխականությունը առկա է, այն նշանակալի է և շարունակում է աճել: Այս նկատելի տեղաշարժերը պայմանավորված են կլիմայի փոփոխության և մարդու ընթացիկ գործունեության ազդեցությամբ:

Ջրային ռեսուրսների փոփոխականությունն ուղղակիորեն ազդում է բնակչության, տնտեսությունների և էկոհամակարգերի վրա՝ համակարգը դարձնելով ավելի քիչ կանխատեսելի կամ պահանջելով ավելի համակարգային կառավարման պրակտիկա: Ջրային ռեսուրսների կառավարումը դառնում է ավելի բարդ՝ ազդելով հեղեղումների և երաշտի կառավարման, ջրի որակի, ինչպես նաև օգտագործման բոլոր տեսակների համար ջրի արդար և կայուն հասանելիության վրա:

Փոփոխվող հիդրոլոգիական պայմաններին արդյունավետ կերպով հարմարվելու համար որոշիչ նշանակություն ունեն մեր ջրային ռեսուրսների հետևողական մոնիթորինգը և գնահատումը[4], որը հնարավորություն է տալիս ջրի հետ կապված խնդիրների մասին ընդհանուր պատկերացում կազմել, որի հիման վրա հնարավոր կլինի մշակել համաձայնեցված լուծումներ; միևնույն ժամանակ, տվյալների բացակայությունը կարող է նպաստել հակամարտությունների բռնկմանը:

Ինչպե՞ս կարող է ջուրը գործիք լինել խաղաղության խթանման համար:

Ջրի սակավությունը գնալով ավելի լուրջ խնդիր է դառնում բոլոր մայրցամաքներում, ընդ որում, դրանից առավել շատ տուժում են բնակչության աղքատ շերտերը: Կլիմայի փոփոխության դեմ կայունության բարձրացման և աճող բնակչությանը արդար և կայուն սպասարկում ապահովելու համար անհրաժեշտ է կիրառել այս սահմանափակ ռեսուրսի կառավարման համապարփակ և ներառական մոտեցում՝ կենտրոնացած մարդու իրավունքների վրա և հիմնված հուսալի ու վստահելի տվյալների վրա:

Այս կոնտեքստում ջուրը կարող է դառնալ խաղաղության խթանման կատալիզատոր կառավարման բոլոր մակարդակներում:

- ✓ **Համայնքային մակարդակում**, ջուրը կարող է միավորել տարբեր ջրօգտագործողների կամ «իրավատերերի»՝ հաճախ տարբեր էթնիկական կամ կրոնական խմբերից, ընդհանուր գործի շուրջ և մեկնարկային կետ ապահովել երկխոսության, հաշտության և խաղաղության հաստատման համար:
- ✓ **Ազգային մակարդակում** ջրօգտագործող տարբեր ոլորտների միջև համագործակցության անհրաժեշտությունը կարող է ելակետ հանդիսանալ շահերի համակարգման համար:

[3] Gleick, P. and Shimabuku, M. (2023), "Water-related conflicts: definitions, data, and trends from the water conflict chronology".Environ. Res. Lett. 18 034022, p.2-3: https://iopscience.iop.org/article/10.1088/1748-9326/acbb8f

[4] WMO (2023), *State of Global Water Resources 2023* report: https://public.wmo.int/en/our-mandate/water/state-of-global- water-resources-2023

- ✓ **Անդրսահմանային մակարդակում** ընդհանուր ջրային ռեսուրսների շուրջ համագործակցությունը և «հիդրոդիվանագիտությունը» կարող է մեկնարկային կետ լինել հաղորդակցության և ավելի լայն համագործակցության համար, ներառյալ այն հարցերով, որոնք դուրս են ջրային ռեսուրսների շրջանակներից: Հետկոնֆլիկտային իրավիճակներում ջրային համագործակցությունը առանցքային դեր է խաղում վստահության վերականգնման և երկարաժամկետ կայունության ամրապնդման գործում՝ ստեղծելով շոշափելի հիմք համագործակցության և փոխըմբռնման համար:

Բոլոր մակարդակներում տարբեր դերակատարները պետք է ապահովեն իրավատերերի արդյունավետ մասնակցությունը, հատկապես ափամերձ (այսինքն ջրային մարմնին հարող) համայնքների՝ ներքին և միջսահմանային հակամարտությունները կանխելու համար: Թափանցիկությունը, հաշվետվողականությունը և տեղեկատվության բաց հասանելիությունը նույնպես կարևոր են ջրերի կառավարման հարցում մարդու իրավունքների վրա հիմնված մոտեցումը երաշխավորելու համար:

Որո՞նք են ջրային ռեսուրսների շուրջ միավորվելու առավելությունները:

Ապացուցված է, որ ջրային ռեսուրսների ոլորտում երկրների և սեկտորների համագործակցությունը օգուտներ է բերում, որոնք արագացնում են առաջընթացը Կայուն զարգացման ոլորտում նպատակներին հասնելուն, ներառյալ անվտանգ խմելու ջրով և սանիտարական պայմաններով ապահովումը, պարենային անվտանգության բարելավումը, առողջ ապրելակերպի միջոցների և էկոհամակարգերի պահպանումը, նպաստելով կլիմայի փոփոխության նկատմամբ կայունության բարձրացմանը, աղետների ռիսկի նվազեցմանը, ապահովելով վերականգնվող էներգիայով, աջակցելով քաղաքներին և արդյունաբերությանը, ինչպես նաև խթանում է տարածաշրջանային ինտեգրմանը և խաղաղության հաստատմանը[5]:

Անդրսահմանային համագործակցությունը սկզբունքորեն կարևոր է ներդրումների և անվտանգության ապահովման բարենպաստ պայմանների ստեղծման համար:
Այն նաև բարձրացնում է էկոհամակարգերը և մարդկանց առողջությունը պաշտպանելու պատրաստվածությունը, հատկապես այնպիսի ճգնաժամային իրավիճակների դեպքում, ինչպիսիք են երաշտը, հեղեղումները կամ վթարային աղտոտումը:

Ինչպե՞ս կարող ենք միասին աշխատել, որպեսզի ջուրն օգտագործենք խաղաղության համար:

2015 թվականին Ժնևում՝ ՄԱԿ-ի համագումարի 15 անդամ-պետությունների նախաձեռնությամբ ստեղծվեց Ջրի և խաղաղության հարցերով բարձր մակարդակի համաշխարհային խումբը, վերլուծելու համար ջուրը խաղաղության և անվտանգության պահպանման համատեքստում: Խմբի ուղենշային զեկույցում՝ *«Գոյատևման խնդիր»*, տրված են կոնկրետ առաջարկներ և հանձնարարականներ՝ ջուրը որպես խաղաղության գործիք կիրառելու հնարավորության վերաբերյալ:
(Նայել հղումը ներքևում «Լրացուցիչ նյութեր» բաժնում):
Ջուրը խաղաղության համար օգտագործելու նպատակով համատեղ աշխատանքի 3 ընդհանուր սկզբունքները հետևյալն են.

- **Ջրային ռեսուրսների ոլորտում համագործակցությունը պետք է լինի ներառական:** Ջրային ռեսուրսները մատակարարում են բազմաթիվ շահագրգիռ կողմերի և կրում նրանց ազդեցությունը, ներառյալ քաղաքացիական հասարակությունը, կառավարությունը (ազգային և տեղական), բնիկ ժողովուրդները, լրատվամիջոցները, մասնավոր հատվածը և գիտական համայնքը, բազմաթիվ մակարդակներում: Ջրային ռեսուրսների կառավարման համակարգերի տեսանկյունից պետք է հաշվի առնվեն ջրային համագործակցության միջմշակութային, սեռային, տարիքային և ներառական ասպեկտները և շահագրգիռ կողմերի տարբեր արժեքները:

[5] UNECE and UNESCO (2023), Concept paper for interactive dialogue 4 at the UN 2023 Water Conference: *Water for Cooperation: Transboundary and International Water Cooperation, Cross Sectoral Cooperation, including Scientific Cooperation, and Water Across the 2030 Agenda*: https://sdgs.un.org/conferences/water2023/events/interactive-dialogue-4

- **Ջրային ռեսուրսների ոլորտում համագործակցությունը պետք է լինի միջոլորտային:** Ջանքերի միավորումը այնպիսի ոլորտներում ինչպիսիք են ջուրը, էներգետիկան, գյուղատնտեսությունը, շրջակա միջավայի պահպանությունը և այլն օգնում է ավելի լավ կառավարել փոխզիջումները և կարող են մեծացնել օգուտները, որոնք գոյանում են կոլեկտիվ գործողություններից՝ միաժամանակ պաշտպանելով էկոհամակարգերը: Բազմամակարդակ կառավարման համակարգերը հանդիսանում են տարբեր ոլորտների միջև առկա անհամաձայնությունների հաղթահարման և լեգիտիմ, արդար ու կայուն արդյունքների հասնելու ապահովման առանցքային տարրը:
- **Ջրային համագործակցությունը պետք է նաև լինի գործողություններին ուղղված:** Այն օգուտները, որ համագործակցային գործընթացները կարող են առաջարկել համայնքներին, ոլորտներին, էկոհամակարգերին և երկրներին Կայուն զարգացման նպատակների շրջանակներում հնարավոր են իրատեսական դառնալ միայն այն դեպքում, եթե կոնկրետ քայլեր ձեռնարկվեն ֆինանսավորման և ֆինանսական բացերը, անբավարար և անհասանելի տվյալներին ու տեղեկատվությանը, կարողությունների զարգացման թերությունները, թույլ կառավարման համակարգերը վերացնելու համար, ինչը հանգեցնում է վատ համակարգված և շահագրգիռ կողմերի միջև անհավասարաչափ լիազորությունների բաշխման, ինչպես նաև նորարարական մեթոդների և տեխնոլոգիաների դանդաղ ներդրմանը և յուրացմանը[6]: Ջրային ռեսուրսների շուրջ վաղ և արդյունավետ համագործակցությունը կարող է նաև կանխել, որ զինված հակամարտությունների ժամանակ ջուրը չդառնա ձգան, զենք կամ զոհ: Սահմանակից պետությունների կողմից գետերի ավազանների և ջրատար հորիզոնների վերաբերյալ պաշտոնական պայմանավորվածությունների ստեղծման ուղղությամբ աշխատանքը երկարաժամկետ հաջող համագործակցության համար առանցքային նշանակություն ունի:

Ընդհանուր առմամբ, գիտությունն ու կրթությունը կարևոր նշանակություն ունեն, քանի որ նրանք են թույլ տալիս մարդկանց փոխանակվել գիտելիքներով ու տվյալներով, դրանցից օգուտ քաղել, ինչպես նաև մշակել ընդհանուր մոտեցումներ և լուծումներ: Հայացք նետելով ապագային՝ կարելի է ասել, որ մարդկանց կրթելը, սկսած դպրոցից ջրի դերի մասին խաղաղության, կայունության, սոցիալական հավասարության և բարգավաճման գործում, որոշիչ նշանակություն ունի մարդկանց մոտ այնպիսի գիտակցության և հմտությունների ձևավորման մեջ, որոնք կապահովեն առավել կայուն և խաղաղասեր հասարակության ստեղծումը, որի հիմքում ընկած է ջուրը:

Ի՞նչ կարող եմ անել ես:

Մենք բոլորս կարող ենք ջուրն օգտագործել որպես գործիք խաղաղության համար:

Անհատները, ընտանիքները, համայնքային խմբերը, կազմակերպությունները, հաստատությունները և կառավարությունները. բոլորը կարող են քայլեր ձեռնարկել 2024 թվականի Ջրի համաշխարհային օրվա քարոզարշավի շրջանակներում:

Ներգրավվելու երեք եղանակ կա:

1. Տեղեկանալ

- Ուսումնասիրել ջուր և խաղաղություն կապը, կարդալ ոգեշնչող պատմություններ ամբողջ աշխարհից, https://www.un.org/en/observances/water-day
- Խորանալ ՄԱԿ-ՋՈՒՐ ջրային փաստերի մեջ, https://www.unwater.org/water-facts
- Կարդալ մարտի 22-ին մեկնարկած ՄԱԿ-ի Համաշխարհային զեկույցը ջրային ռեսուրսների վիճակի վերաբերյալ, «Ջրի օգտագործումը խաղաղության և բարեկեցության համար» թեմայով հետևյալ կայքում, https://www.unwater.org/publications/un-world-water-development-report
- Կայուն զարգացման նպատակ 6. պորտալից ծանոթանալ Ձեր երկրում կամ տարածաշրջանում ջրի և սանիտարիայի խնդիրներին, https://www.sdg6data.org/en
- Ուսումնասիրել այլ լրացուցիչ նյութեր հաջորդիվ բերված բաժիններում:

[6] *UNECE and UNESCO (2023), Concept paper for interactive dialogue 4 at the UN 2023 Water Conference: Water for Cooperation: Transboundary and International Water Cooperation, Cross Sectoral Cooperation, including Scientific Cooperation, and Water Across the 2030 Agenda: https://sdgs.un.org/conferences/water2023/events/interactive-dialogue-4*

2. Կիսվել

- Սոցիալական ցանցերում հրապարակել նյութեր Ջրի համաշխարհային օրվան նվիրված օգտագործելով հետևյալ հեշթեգերը #Ջրիհամաշխարհայինօր #Всемирныйденьводныхресурсов #WorldWaterDay բարձրացնելով իրազեկությունը: Տեղեկատվությունը հասանելի է https://www.un.org/en/observances/water-day/resources հղումով:
- Դուք արդեն աշխատո՞ւմ եք ջրի և խաղաղության ոլորտում և կցանկանա՞ք ներգրավվել քարոզարշավին: Տեղեկացրեք մեզ: Ուղարկեք մեզ էլեկտրոնային նամակ campaigns@unwater.org հասցեին և պատմեք մեզ ավելին ձեր աշխատանքի և այն մասին, թե ինչպե՞ս կարող եք ներգրավվել արշավին:

3. Գործել

Ամեն տարի տասնյակ հազարավոր մարդիկ մասնակցում են մարտի 22-ին անցկացվող Ջրի համաշխարհային օրվա միջոցառումներին: Կիսվեք ձեր անցկացրած միջոցառումների նկարներով: Օգտագործեք #Ջրիհամաշխարհայինօր #Всемирныйденьводныхресурсов #WorldWaterDay հեշթեգերը:

Ահա մի քանի օրինակներ այն մասին, ինչ կարելի է նախաձեռնել.

- Խաղալ ֆուտբոլ խաղաղության համար: Կազմակերպեք տեղական «Ֆուտբոլ խաղաղության համար» խաղ կամ խնդրեք Ձեր սիրելի թիմին կամ Ազգային հավաքականին անցկացնել նման խաղ:
- Մտածել, թե ի՞նչ են Ձեզ համար նշանակում Ջուրը և խաղաղությունը ստեղծել գեղարվեստական նկարներ, երգ, ֆիլմ, ուրիշներին ոգեշնչելու համար:
- Կազմակերպել քննարկում Ձեր դպրոցում, համալսարանում, համայնքում, գրասենյակում կամ կազմակերպությունում, որտեղ աշխատում եք, ջուրը խաղաղության համար թեմայով:
- Կազմակերպել գետերի կամ լճերի ափերը մաքրելու միջոցառումներ, ցանկալի է տեղի (համայնքի) բնակիչների մասնակցությամբ, ովքեր համատեղ օգտագործում են այդ ռեսուրսները:
- Կազմակերպել համերգ, ներկայացում կամ սպորտային խաղ, ուշադրություն հրավիրելով ջրի և խաղաղության տեղական (համայնքային) խնդիրներին:
- Եթե դուք ուսուցիչ կամ ուսանող եք, կազմակերպեք, առաջարկեք ջրի թեմայով դաս կամ ամբողջ դպրոցին ներգրավեք ջրի և խաղաղության խնդիրներին նվիրված միջոցառումներին (գործողություններին):
- Կազմակերպել համայնքի տարածքի գետակների, գետերի, լճերի և լողափերի մաքրում:
- Այցելել լճեր, ճահիճներ, գետեր և իմանալ ավելին Ձեզ առավել մոտ գտնվող ջրային էկոհամակարգերի մասին:
- Պարզել, արդյո՞ք Ձեր սպառած ջուրը վերցվում է այնպիսի ջրավազանից, որտեղով անցնում է քաղաքական սահման:
- Կազմակերպել ֆոտոմրցույթ կամ տեղական ցուցահանդես «Ջուր և խաղաղություն» թեմայով:
- Նպաստել կամ սկսել քաղաքացիական գիտության մասնակցային ծրագրեր, որոնք ուղղված են տեղական ջրային մարմինների մասին գիտելիքների խթանմանը, ինչպես նաև հավաքագրել տվյալներ և տեղեկատվություն:

Ֆուտբոլ հանուն խաղաղության

Ֆուտբոլ խաղում են բոլոր մայրցամաքներում միլիոնավոր մարդիկ ամեն շաբաթ:

Ինչպես ցանկացած այլ սպորտաձև, այն ի զորու է հաղթահարել սահմանները և միավորել մարդկանց՝ խաղացողներին և հանդիսատեսին, խաղաղության ու ներդաշնակության ոգով:

«Ֆուտբոլ հանուն խաղաղության» խաղերն անցկացվում են ամբողջ աշխարհում՝ ինչպես խորհրդանշական մարզադաշտերում հայտնի խաղացողներով, այնպես էլ տեղական այգիներում սիրողական թիմերով:

Գո՞ւցե դուք խաղում եք դպրոցական, համայնքային կամ կորպորատիվ թիմում: Ունե՞ք սիրելի պրոֆեսիոնալ ակումբ կամ ազգային հավաքական: Այդ դեպքում դուք կարող եք անցկացնել կամ օգնել կազմակերպել «Ֆուտբոլ հանուն խաղաղության» խաղ:

«Ֆուտբոլ հանուն խաղաղության» խաղերի մասին ավելին կարող եք իմանալ և կիսվել այն ամենով, ինչը որ դուք կազմակերպել եք հետևյալ հեշթեգով և հղումով՝ #Ջրիհամաշխարհայինօր #WorldWaterDay, #Всемирныйденьводныхресурсов: https://www.footballforpeace.org.uk/peace-matches,

Առանցքային փաստեր

- 2.2 մլրդ. մարդ դեռևս ապրում է առանց անվտանգության պահանջներին համապատասխանող խմելու ջրի հասանելիության, ներառյալ 115 միլիոն մարդ, ովքեր խմում են մակերևութային ջրեր (WHO/UNICEF, 2023).[7]
- Երկրագնդի բնակչության գրեթե կեսը ջրի խիստ պակաս է զգում տարվա առնվազն մի մասում (IPCC, 2022).[8] Սպասվում է, որ այդ թվերը կաճեն, և կսրվի վիճակը կլիմայի փոփոխությամբ և բնակչության թվաքանակի աճով պայմանավորված (WMO, 2022:[9]
- Երկրագնդի ջրային պաշարների միայն 0.5%-ն է պիտանի օգտագործման և հասանելի որպես քաղցրահամ ջուր և կլիմայի փոփոխությունը վտանգավոր ազդեցություն է ունենում այդ պաշարների վրա: Վերջին 20 տարիներին ցամաքի ջրային պաշարները, այդ թվում հողի խոնավությունը, ձյունը և սառույցը նվազել են տարեկան 1 սմ արագությամբ, ինչը լուրջ հետևանքներ ունի ջրային անվտանգության համար (WMO, 2021):[10]
- Կլիմայի փոփոխությունը, բնակչության թվաքանակի աճը և ջրի աճող դեֆիցիտը կառաջացնեն ճնշում սննդի մատակարարումների վրա (IPCC, 2014)[11] քանի որ օգտագործվող քաղցրահամ ջրի մեծ մասը, միջինը մոտավորապես 72%-ը, օգտագործվում է գյուղատնտեսության մեջ (UN-Water, 2023):[12]

[7] WHO/UNICEF (2023), *WHO/UNICEF Joint Monitoring Program for Water Supply, Sanitation and Hygiene (JMP) – Progress on household drinking water, sanitation and hygiene 2000-2022: Special focus on gender*: https://www.unwater.org/publications/who/unicef-joint-monitoring-program-update-report-2023

[8] IPCC (2022), *Sixth Assessment Report: Fact sheet – Food and Water*: https://www.ipcc.ch/report/ar6/wg2/downloads/outreach/IPCC_AR6_WGII_FactSheet_FoodAndWater.pdf

[9] WMO (2022), Press release: "Protect our people and future generations: Water and Climate Leaders call for urgent action": https://public.wmo.int/en/media/press-release/protect-our-people-and-future-generations-water-and-climate-leaders-call-urgent

[10] WMO (2021), *2021 State of Climate Services: Water*: https://library.wmo.int/viewer/57630/download?file=1278_en.pdf&type=pdf&navigator=1

[11] IPCC/Jiménez Cisneros et al (2014), Chapter 3: "Freshwater Resources". Climate Change 2014: Impacts, Adaptation, and Vulnerability. Part A: Global and Sectoral Aspects. Contribution of Working Group II to the Fifth Assessment Report of the Intergovernmental Panel on Climate Change: https://www.ipcc.ch/site/assets/uploads/2018/02/WGIIAR5-Chap3_FINAL.pdf

[12] UN-Water (2023), *Blueprint for Acceleration: Sustainable Development Goal 6 Synthesis Report on Water and Sanitation 2023*: https://www.unwater.org/publications/sdg-6-synthesis-report-2023

- Վերջին 50 տարիների ընթացքում, ջրի հետ կապված աղետները գերակշռում են ընդհանուր աղետների ցանկում և կազմում են բնական աղետների հետ կապված բոլոր մահերի 70 տոկոսը (World Bank, 2022).[13]
- Մինչև 15 տարեկան երեխաները, ովքեր ապրում են երկարատև հակամարտությունների հետևանքով տուժած երկրներում, միջինում գրեթե երեք անգամ ավելի հավանական է, որ մահանան աղեստամոքսային հիվանդություններից, որոնք առաջանում են անվտանգ ջրի, սանիտարահիգիենիկ պայմանների բացակայության պատճառով, քան ուղղակի բռնությունից (UNICEF, 2019).[14]
- Աշխարհի քաղցրահամ ջրերի հոսքի 60%-ը կազմում են անդրսահմանային ջրերը և 153 երկրի տարածքում է գտնվում 310 անդրսահմանային գետային կամ լճային ջրավազաններից առնվազն մեկը, և այդ երկրները գույքագրել են 468 անդրսահմանային ջրատար հորիզոնների համակարգեր (UN-Water, 2023):[15]
- Միայն 24 երկիր են հայտնել, որ իրենց անդրսահմանային ջրավազանների մասով առկա են համագործակցության համաձայնագրեր (UN-Water, 2021):[16]
- Օգուտները ջրի և սանիտարիայի ոլորտում կատարված ներդրումներից գերազանցում են ծախսերին, քանի որ այն կարող է բարելավել առողջությունը, արտադրողականությունը, միջավայրը և սոցիալական ցուցանիշները: Ջրի և սանիտարիայի ոլորտում կատարված յուրաքանչյուր 1 ԱՄՆ դոլարի ներդրումը բերում է 4.3 ԱՄՆ դոլարին համարժեք եկամուտ (UN-Water GLAAS, 2014):[17] Անդրսահմանային գետերում և ջրատար հորիզոններում դա հատկապես կապված է հիդրոէներգիայի արտադրության, հեղեղումների և երաշտի կառավարման, ջրի որակի և էկոհամակարգերի պահպանման հետ:

Ջրի հետ կապված մեխանիզմները խաղաղության համար

ՄԱԿ-ի Ջրի կոնվենցիա (Անդրսահմանային ջրային հոսքերի և միջազգային լճերի պաշտպանության և օգտագործման մասին կոնվենցիա): https://unece.org/environment-policy/water/about- the-convention/introduction

ՄԱԿ-ի ջրային հոսքերի կոնվենցիա (Միջազգային ջրային հոսքերի ոչ նավագնացային օգտագործման իրավունքի մասին կոնվենցիա): https://unece.org/environment-policy/water/un-watercourses- convention.

Ճահճային տարածքների մասին կոնվենցիա (Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթռչունների բնակավայր Ռամսարի կոնվենցիա): https://www.ramsar.org/

Կայուն զարգացման 2030 օրակարգ: https://sdgs.un.org/2030agenda

Փարիզի համաձայնագիրը (կլիմայի փոփոխության մասին): https://unfccc.int/process-and-meetings/the- paris-agreement

Աղետների ռիսկի նվազեցման Սենդայի շրջանակային ծրագիրը 2015-2030 թթ: https://sdgs.un.org/publications/sendai-framework-disaster-risk-reduction-2015-2030- 17988

[13] World Bank (2022), Webpage: "Water resources management": https://www.worldbank.org/en/topic/waterresourcesmanagement
[14] UNICEF (2019), Press release: "*Children living in protracted conflicts are three times more likely to die from water-related diseases than from violence*": https://www.unicef.org/press-releases/children-living-protracted-conflicts-are-three-times-more- likely-die-water-related
[15] UN-Water (2023), *Blueprint for Acceleration: Sustainable Development Goal 6 Synthesis Report on Water and Sanitation 2023*: https://www.unwater.org/publications/sdg-6-synthesis-report-2023
[16] UN-Water (2021), *Summary Progress Update 2021: SDG 6 — water and sanitation for all*: https://www.unwater.org/publications/summary-progress-update-2021-sdg-6-water-and-sanitation-for-all
[17] UN-Water GLAAS (2014), *Investing in Water and Sanitation: Increasing Access, Reducing Inequalities*: https://www.unwater.org/publications/un-water-glaas-2014-investing-water-and-sanitation

Անդրսահմանային ջրատար հորիզոնների մասին օրենքի հոդվածների նախագիծ 2008: https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000182431

Ջրային ռեսուրսների համալիր կառավարում: https://www.unep.org/explore-topics/disasters- conflicts/where-we-work/sudan/what-integrated-water-resources-management.

Լրացուցիչ նյութեր:

Geneva Water Hub (2019), *Geneva List of Principles on the Protection of Water Infrastructures* and further developments: https://www.genevawaterhub.org/resource/geneva-list-principles-protection-water-infrastructure

Geneva Water Hub (2017), *A Matter of Survival* report of the Global High Level Panel on Water and Peace: https://www.genevawaterhub.org/resource/matter-survival

Report of the Special Rapporteur on the rights to safe drinking water and sanitation: *Water as an argument for peace, twinning and cooperation (A/78/253)*: https://www.ohchr.org/en/documents/thematic-reports/a78253-report-special-rapporteur- human-rights-safe-drinking-water-and

UNESCO (2024), *UN World Water Development Report 2024*: https://www.unwater.org/publications/un-world-water-development-report

UNESCO (2022), *Transboundary Aquifers: Challenges and the Way Forward*. Sanchez, R. (Ed). Paris, UNESCO: https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000383775

UNICEF (2021), *Water under fire* – report series on the role of water in conflicts around the world: https://www.unicef.org/stories/fast-facts-water-sanitation-hygiene-conflict

UN-Water (2020), *UN-Water Policy Brief on the United Nations global water conventions: Fostering sustainable development and peace*: https://www.unwater.org/sites/default/files/app/uploads/2021/01/UN-Water_Policy_Brief_United_Nations_Global_Water_Conventions.pdf

UN-Water (2023), *Blueprint for Acceleration: Sustainable Development Goal 6 Synthesis Report on Water and Sanitation*: https://www.unwater.org/sites/default/files/2023-08/UN-Water_SDG6_SynthesisReport_2023.pdf

GFDRR/World Bank (2018), *Assessment of the State of Hydrological Services in Developing Countries*: https://www.gfdrr.org/en/publication/assessment-state-hydrological-services- developing-countries.